



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 11 » Հոկտեմբեր 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 279-Ն

ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆԻ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴԻՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N° 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N° 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետն ու Տաթևիկ Վարդանի Գյուլումյանի 2020 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) օդային փոխադրումների կարգավորման վարչության ավագ մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.5-Մ3-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի նոյեմբերի 10-ին անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Տաթևիկ Վարդանի Գյուլումյանին նշանակել Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության ավագ մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-23.5-Մ3-1) պաշտոնում՝ 9 ամիս փորձաշրջանով:

2. Տաթևիկ Վարդանի Գյուլումյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 22-4-23.5-Ղ4-2) Արաքսյա Թառլամազյանին:

3. Տաթևիկ Վարդանի Գյուլումյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 175 932 (հարյուր յոթանասունհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) դրամ՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

11/11/2020

X 

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Signed by: ZALINYAN MIKAYEL 1310880573

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ